ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թ. նոյեմբերի 1 **N 191-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՂՔՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղքք համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ քաղաքացի Միեր Պետրոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.5 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից (ծածկագիր՝ 02-008-0120-0001) 0.001 հա վարձակալության իավունքով տրամադրել է <<ՖՏԱ-ՏԵԼԵԿՈՄ>> ՓԲԸ-ին:

Խախտվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և54-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Աղքք համայնքի ղեկավար Արթուր Ավետիսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **հարյուր հիսուն հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:
2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Աղքք համայնքի ղեկավար Արթուր Ավետիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աղքք համայնքի ղեկավար Արթուր Ավետիսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ